

891.990
Ա-65

ԱՇԿԱԼ

ԱՄԲԱՐՈՒՄ



Պրոպագանդայի Զուգահեռ. Հայկական

ՊԵՏԱԿԱՆ * ՅԵՐԵՎԱՆ

8881.935

4-65

из.

ԴԵՏԶՐԱՏ N° 1545
 ԿԼԻ.ԴԵՏԶՐԱՏԻ ՊԱՏ.
 N° 1220 ԳՐԱԽԵՄԿԱՐ
 N° 6225 (A) ՏԻՐԱԾ 1000



МБ. ЗУБОВО
Гос. Рубн. Библиотека
2002 - СССР
ИМ. А. Мясникова
П. И.

Ամառվա շոգ որվա մեկում,
 Քաղաքի նեղ փողոցներով
 Պիոներական վաշտն եր անցնում
 Այլ ու կարմիր վզկապներով:
 Ուրախ, զվարթ յերգերի տակ
 Նրանք գնում են դեպի ճամբար...
 Շարժվում է մի մեծ բանակ
 Վոսկեծփուն արտի նման:
 Առաջից մի ժիր պիոներ,
 Դրոշակը բարձր պարզած,
 Քայլում եր հաղթ ու անվեհեր,
 Արևի շեկ փայլը գրկած:
 Ճանապարհի յերկու կողմից
 Վոսկեփրփուր արտերը~ծով
 Որորվում են քամու հովից
 Ու մեղմ խոսում փոփսոցով:
 Պիոներական վաշտը զվարթ,
 Շուրթերում յերգ, կրծքերին~ վարդ,
 Անցան արտեր, սարեր քարոտ
 Ու կանգ տուան գետակի մոտ:
 Ու եղ բարակ ջրի ափին
 Մանուկները ճամբար կապին,
 Յեվ շտաբի բաց ճակատում
 Կարմիր դրոշն եր հուրհրատում:



Վեր են կենում ամեն որ վաղ,
 Լողանում են գետակում պաղ,
 Ու ենտեղից—աշխատանքի,
 Դեպի խաղեր ու մարզանքի:

Ճամբարում մեր պիտները
 Տոկուն կյանքի յե սովորում,
 Կարմիր մարտիկ նա պիտ լինի
 Ապագայի կռիվներում:

Ճամբարի մոտ, սարի փեշին
 Գյուղն ե փռված ծուխը դռնին,
 Ու, ժամի ծեր զողանջի տեղ,
 Սերմզտիչն ե հնչում ենաեղ:

Արշալույսից մինչե գիշեր
 Դեղին խուրձերը ցորենի
 Գյուղ են բերում հեռու հանդից
 Ու դարսում են կայի միջին:

Եզ գյուղում մի խեղճ մարդ կար,
 Անունը Սեթ, մենակ, անճար,
 Մտածում եր, թե վո՞նց անի,
 Վոր իր հացը հանդից տանի:

Շատ միտք արավ, դես-դեն ընկավ,
 Կուլակին նա չուզեց դիմել,
 Ու մի որ նա ճամբար յեկավ—
 Խնդրեց՝ իրեն մի ճար անել:



— Քյասիբ մարդ եմ, խեղճ ու մենակ,
Վոչ յեզ ունեմ, վոչ ել բատրակ,
Ոգնեցեք ինձ, հացըս քաղեմ,
Քանի շուտ ե—հանդից տանեմ:

Մի որ յելան ամբողջ կազմով,
Սեթի արտը շուտ քաղեցին,
Սերմը զրտին մեքենայով,
Եսլի միջից տուն բերեցին:

Ուրախացավ Սեթը սրտում՝
Ես ի՞նչ բաղդ եր իրեն ժպտաց,
Ել չի մնա խեղճ ու տրտում,
Չմռանն ունի մի կտոր հաց:

— Վայ, ձեր հոգուն մատաղ, բալեք,
Ձեր կյանքում սև որ չ'տեսներ,
Եդ ձեր ջահել թափ ու հալով
Ձը թողեցիք տունըս լալով:

Ու պիտներ աղջկա հետ,
Կալի միջին՝ ջահել դառած,
Պար ե թռչում ծերուկը Սեթ,
Փափախը ծուռ գլխին դրած:
Իսկ կտուրի ծայրին կանգնած
Գյուղի չար դեմ՝ կուլակ Մակին
Աչքի տակով նայում ե ցած,
Քիչ ե մնում, վոր տըրաքի:



Ու ամեն որ, որվա հովին
 Ճամբար յեկած հերոսներին
 Հյուր են գալիս գյուղում յեղած
 Մաճկալ, հոտաղ ու խաշնարած:
 Տես, մեկի հետ զրուցում են,
 Լենին պապի մասին պատմում:
 Իսկ մյուսին ուսուցում են
 Մեր պայքարը վողջ աշխարհում:
 Ենտեղ, կանաչ ծառի տակին,
 Լիկկայան են բացել հանդում,
 Ու եղ գյուղի տղաներին,
 Դիր-կարդալ են սովորեցնում:
 Գյուղի կայտառ մանուկներից,
 Կոլվարները խմբեր կազմում,
 Կոփում են այդ ծաղիկներից
 Մի նոր բանակ կամաց-կամաց:
 Պիոներներ, պատրաստ յեղեք,
 Գալիք մարտում տոկո՛ւն, զգանատ,
 Խորհրդների կանչին, կառչեք...
 — Մենք միշտ պատրաստ,
 մենք միշտ պատրաստ:



ԳԻՆԸ՝ 50 ԿՈՊ.

202-

6854



ԱՇՊԱՆ
Վ **ԼԱԳԵՐՅԱԽ**
ԴԻՅ ՍՏՐԱ ԶՐԻՎԱՆԻ

19